Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը «Ծիծեռնակ» ճամբարում ՝ սիրիահայ երեխաներին հյուրընկալելու կապակցությամբ

15.07.2013թ.

Հարգելի տիկին նախարար,

Գերաշնորհ տեր:

Ջերմորեն շնորհավորելով սիրիահայ պատանիների և աղջիկների, նրանց մանկավարժների գալուստը Լոռու բնաշխարհ, անկեղծորեն ուզում եմ ասել. թանկագին բարեկամներ, որքան որ դուք եք ուրախացել հյուրընկալվելով մայր հայրենիքի գեղատեսիլ Լոռիում, նույնքան մենք՝ լոռեցիներս ենք ուրախ հյուրընկալվելու ձեզ՝ մեր հայրենակիցներին, ովքեր ճակատագրի բերումով ծնվել են հայրենիքից հեռու, օտար ափերում, բայց հասակ են առել և դաստիարակվել հայեցի ոգով, հայրենիքի սիրով ու կարոտով:

Ու վստահ եմ, որ «Ծիծեռնակ» ճամբարում ձեր հանգիստը կլինի ոչ միայն հետաքրքիր ժամանցով, այլև դուք առիթ կունենաք ծանոթանալու նաև Լոռու մարզի հնագույն ճարտարապետական հուշարձաններին, ոգեղեն այն արժեքներին, որոնցով հարուստ է Լոռին, որոնցով հարստացվել է հայոց գրականությունը, արվեստը, ճարտարապետությունը:

Ուզում եմ նաև նշել, որ Լոռին, մասնավորապես Վանաձոր քաղաքը սիրիահայերին ջերմորեն դիմավորել և նրանց համար մշտական բնակության պայմաններ է ստեղծել 1947 և 1962 թվականներին: Հարյուրավոր ընտանիքներ՝ ներգաղթելով հայրենիք, բնակություն հաստատելով այն ժամանակ Կիրովական կոչվող քաղաքում, արժանապատվությամբ ու նվիրումով մասնակցեցին քաղաքի կառուցապատման ու շենացման գործին: Այնպես որ, թանկագին բարեկամներ, դուք այսօր հյուրընկալվել եք մի քաղաքում, որտեղ կա նաև սիրիահայ վարպետների արդար աշխատանքի վաստակը:

Կրկին ողջունելով ձեզ, մաղթում եմ հրաշալի, բովանդակալից հանգիստ և վառ ու անկրկնելի տպավորություններ մեր մարզից: